# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՀՈՒՆԻՍԻ 2024թվականի N 588-Ա

### ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով, 3-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Ճամբարակծ համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի տեղեկանքը Մարտիկ Բաբայանի կողմից Ճամբարակ համայնքի բյուջեի նկատմամբ չկատարված հարկային պարտավորությունների վերաբերյալ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Քաղաքացի Մարտիկ Այվազի Բաբայանի /հաշվառված՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Ճամբարակ, Արցախի փ. 9 տուն հասցեում/ կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող 05-002-0084-0023 կադաստրային ծածկագրով 0,27 հա արոտավայրը, ՀՀ Հարկային օրենսգրքով սահմանված կարգով անշարժ գույքի ընդհամենը՝ 13393 ՀՀ դրամի չափով հարկ վճարելու պարտականությունը չկատարելու փաստի առթիվ հարուցել վարչական վարույթ և իրականացնել քննարկում 2024 թվականի հունիսի 24-ին ժամը 14:45-ին ք. Ճամբարակ, Գարեգին Նժդեհի 125 հասցեում, Ճամբարակի համայնքապետարանի շենքում:
2. Հարուցված վարչական վարույթի մասին եռօրյա ժամկետում ծանուցել Մարտիկ Բաբայանին:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում իրազեկման պահից:

**Համայնքի ղեկավար՝** **ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ**

20 24 թ. հունիսի 14
ք.Ճամբարակ